ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«19» հունիսի 2019 թվականի N:75 ք.Գյումրի

ԲԱՐՍԵՂ ՔՈՉԱՐՅԱՆԻՆ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի, 29-րդ հոդվածի 1-ին մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի նոյեմբերի 8-ի N:1239-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 2-րդ, 4-րդ, 11-րդ և 22-րդ կետերի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի ներքին աուդիտի բաժնի պետի 2019 թվականի հունիսի 17-ի զեկուցագիրը.

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի ներքին աուդիտի բաժնի գլխավոր մասնագետ Բարսեղ Քոչարյանին 2019 թվականի հուլիսի 2-ին գործուղել քաղաք Երևան՝ «Մաստեր Սթայլ» ուսումնական կենտրոն սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն՝ «Ծրագրային բյուջետավորում» թեմայով վերապատրաստման դասընթացին մասնակցելու նպատակով:
2. Գործուղման տևողությունը մեկ օր՝ 2019 թվականի հուլիսի 2-ին:
3. Բարսեղ Քոչարյանի՝ գործուղման գտնվելու ընթացքում Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի ներքին աուդիտի բաժնի գլխավոր մասնագետի պարտականությունների կատարումը վերապահել նույն բաժնի պետ Մուշեղ Մուրադյանին:
4. Բարսեղ Քոչարյանին՝ գործուղումից վերադառնալուց և աշխատանքի ներկայանալուց հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում, ներկայացնել հաշվետվություն գործուղման ընթացքում կատարած աշխատանքների վերաբերյալ՝ համաձայն հաստատված ձևի:

Տ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է